



ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ info_yeghegnadzor@aarhus.am, narekbeq@yahoo.com

Ե-04/14

16 հունիս

ՀՀ Էներգետիկայի ու բնական պաշարների նախարար

Երվանդ Զախարյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

Հիմք ընդունելով Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի կողմից ուղարկված Ե-01/14 հարցման պատասխանը, որտեղ արտացոլված են Վայոց ձորում գործող ՀԷԿ-ների կողմից 2013 թվականին արտադրված էլեկտրաէներգիայի ծավալներն ըստ ամիսների ու ՀԷԿ-ների, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն

1. 2013 թվականին Վայոց ձորի մարզում գործող ՀԷԿ-ների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների մասին ըստ ամիսների ու ՀԷԿ-ների:
2. 2014 թվականի առաջին եռամսյակում Վայոց ձորի մարզում գործող ՀԷԿ-ների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների մասին ըստ ամիսների ու ՀԷԿ-ների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյան